ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 9 դեկտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Վ. Պողոսյանի
Կ. Բալայանի

Քննության առնելով քաղաքացի Լեւոն Պողոսյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Լեւոն Պողոսյանը 2013թ. նոյեմբերի 20-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 28-րդ կետը եւ 290-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 19-րդ եւ 91-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր»:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց.

1. Ըստ դիմողի՝ վիճարկվող նորմերը լիարժեք չեն ապահովում անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացումը եւ արդար ու անաչառ դատաքննությունը՝ հակասելով ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 19-րդ եւ 91-րդ հոդվածներին:

2. Դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 28-րդ կետը չի կիրառվել դիմողի նկատմամբ: Դիմողի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից վիճարկվող դրույթի կիրառումը՝ որպես անհատական դիմումին ներկայացվող պայման, ի թիվս այլնի, նախատեսված է «Սահմանադրական դատարանի մասին»

ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

3. Դատական կազմը գտնում է նաեւ, որ ներկայացված դիմումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի մասով, համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 28 եւ 69-րդ հոդվածների պահանջներին:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով եւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Քաղաքացի Լեւոն Պողոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Քաղաքացի Լեւոն Պողոսյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 28-րդ կետի մասով մերժել:

3. Սույն գործով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

9 դեկտեմբերի 2013 թվականի
ՍԴԴԿՈ/2-32